Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Իգնատի Առաքելյանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 12-14-ը Ուզբեկստանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Իգնատի Առաքելյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ գյուղատնտեսության նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետը**

Ուզբեկստանի Հանրապետություն, 2017 թվականի դեկտեմբերի 12-14-ը

4. **Հրավիրող կողմը**

Ուզբեկստանի Հանրապետության փոխվարչապետ, գյուղատնտեսության և ջրային տնտեսության նախարար Զ.Միրզաև

5. **Գործուղման նպատակն, աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը**

Գյուղատնտեսության բնագավառում հայ-ուզբեկական համագործակցության զարգացմանն առնչվող հարցերի քննարկում

6. **Քննարկված թեմաները**

Հայաստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության միջև գյուղատնտեսության բնագավառում երկկողմ համագործակցության զարգացման հարցեր, մասնավորապես՝ այգեգործության, խաղողագործության, գինեգործության, կոնյակագործության, գյուղատնտեսական տեխնիկայի, մասնագիտական փորձի փոխանակման, պտուղբանջարեղենի վերամշակման և այլ բնագավառներում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը**

- Հանդիպում Ուզբեկստանի Հանրապետության փոխվարչապետ, գյուղատնտեսության և ջրային տնտեսության նախարար Զ.Միրզաևի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև գյուղմթերքի պահպանության, սառանարանային տնտեսությունների, բամբակագործության, պարարտանյութի արտադրության հարցերը,

- Այցելություն գինու-օղու արտադրություն «Խովրենկո», ծանոթություն ընկերության գործունեությանը և գինեգործական արտադրանքի ցուցահանդեսին,

- Այցելություն այգեգործական «Շարկ Սանոատ» կոնցեռն,

- Այցելություն «Ագրոմիր» ձեռնարկություն, ծանոթություն ձեռնարկության գործունեությանը և Սամարկանդի շրջանում վերամշակված արտադրանքին,

- Այցելություններ «Gold Dried Fruit Export» ԲԲԸ, «Տաշքենդ-Վինո» կոմբինատ, «Տաշքենդի գյուղատնտեսական տեխնիկայի գործարան» արտադրական միավորում

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Փոխգործակցության զարգացման համար նպատակահարմար է համարվել երկու երկրների մասնագետների և գործարարների միջև կապերի աշխուժացումը և փորձի փոխանակումը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Նախարար Իգնատի Առաքելյանը Զոհիր Միրզաևին հրավիրել է այցելել Հայաստան՝ տեղի գյուղատնտեսությանը ծանոթանալու և հետագա համագործակցության ծրագրեր քննարկելու նպատակով: Պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկել ուզբեկական արտադրության գյուղատնտեսական տեխնիկայի Հայաստան ներկրելու, գյուղտեխնիկայի լիզինգի ծրագրում ուզբեկական կողմի մասնակցության և մեքենատրակտորային կայան ստեղծելու հնարավորությունը: Առաջարկվել է փորձի փոխանակում իրականացնել գյուղմթերքի արտադրության, պահպանման և վերամշակման բնագավառներում:

10. **Գործուղվող**

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյան